



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՑ ԾԵՒԱԽՈՏԻ ԴԱՇԻՆՔ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
28 հոկտեմբերի, 2006թ.

Երևան- Հոկտեմբերի 2-ին, ժ.12:00-ին, Կոնգրես հյուրանոցում (միացյալ պլենար դահլիճում) տեղի կունենա «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի մամլո ասուլիսը՝ նվիրված Հայաստանում հակածխախոտային օրենսդրության առաջխաղացմանը և Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծխախոտի դեմ պայքարի մասին» Շրջանակային կոնվենցիայի վավերացման տարեդարձին:

Ա.թ. հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտնում «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որի 15-րդ հոդվածի 5.3 կետի համաձայն՝ արգելվում է ծխախոտի արտաքին գովազդը պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ միջոցներով:

2004թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) «Ծխախոտի դեմ պայքարի մասին» Շրջանակային կոնվենցիան, պարտավորվելով մինչև 2010թ. Հայաստանում կիրառել ծխախոտի գովազդի համապարփակ արգելում:

Ըստ սոցիոլոգիական հարցումների բնակչության գերակշռող մասը սատարում է ծխախոտի գովազդի լայնածավալ արգելմանը: Դեռևս 2005թ.-ին Երևանում, Շիրակի և Սյունիքի մարզերում անցկացված հարցումների համաձայն, բնակչության 73.0%-ը կողմ էր զանգվածային լրատվական միջոցներում (ԶԼՄ), իսկ 66.8%-ը՝ վահանակների միջոցով ծխախոտի գովազդի արգելմանը:

Ողջունելով ծխախոտի արտաքին գովազդի օրենսդրական արգելումը՝ «Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքը համապատասխան պետական մարմինների ուշադրություն է հրավիրում այն անվիճահարույց ճշմարտությանը, որ գովազդի արգելումը առաջնահերթորեն ուղղված է երիտասարդների և անչափահասների շրջանում ծխախոտի օգտագործման կանխարգելմանը:

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքը արձանագրում և համընդհանուր ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ ԱՀԿ «Ծխախոտի դեմ պայքարի մասին» Շրջանակային կոնվենցիայի և «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո առկա են օրենքի զանգվածային խախտումներ: Մասնավորապես կանոնավոր չի գործում «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արգելքը. «Ծխելն արգելվում է առողջապահական, կրթական, մշակութային հաստատություններում, տրանսպորտում և սահմանափակվում է բոլոր հիմնարկների, կազմակերպությունների շենքերի տարածքում»:

Հարցումների արդյունքներից պարզվում է, որ հանրապետությունում միայն 55.6% աշխատավայրերում է կիրառվում ծխախոտի օգտագործման սահմանափակում:

Միջազգային փորձը վկայում է, որ արդյունավետ է ծխելու ոչ թե մասնակի, այլ միայն





լիարժեք արգելքը: Այսպես օրինակ՝ Երևանում կատարված օդի մաքրության չափումները ցույց են տվել, որ այն հաստատություններում, որտեղ ծխելը արգելված չէր կամ արգելված էր մասնակիորեն, մասնավորապես սննդի և ժամանցի վայրերում, օդի աղտոտվածությունը յոթ անգամ գերազանցում էր համապարփակ արգելք ներդրած Ինջանդիայի չափանիշներին:

Զնայած «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված արգելքին՝ բնակչության զգալի զանգված դեռևս ենթարկվում է ծխախոտի հեռուստագովազդի ազդեցությանը; Ըստ հարցման արդյունքների յուրաքանչյուր երկրորդ մեծահասակ հայկական հեռուստատեսությամբ դիտել է ծխախոտի գովազդ: Առկա իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է հետևողականորեն կատարելագործել օրենսդրական դաշտը, բացառելով հեռուստառադիո եթերում ծխախոտի անուղղակի, թաքնված և ցանկացած այլ տեսակի գովազդ:

Համազայն ՀՀ վարչապետի 2005թ. դեկտեմբերի որոշման «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազորված մարմինը վաղուց ի վեր պիտի գործեր, որը ցավոք մինչ օրս չի սահմանվել:

Այսպիսով, հանրային առողջության «շահը» շարունակվում է գոհաբերվել ծխախոտի արտադրության բիզնեսի շահին: Ծխախոտի գները շարունակում են մնալ ռեկորդային ցածր՝ դարձնելով այն առավել մատչելի դեռահասների համար: Միջազգային ծխախոտային ընկերությունները շարունակում են հայ հասարակությանը հրամցնել խեղաթյուրող տեղեկատվություն իրենց մահացու ապրանքի վերաբերյալ:

Ծանուցում. 2006թ. օգոստոսին Ամերիկայի Միացյալ Նահանգներում (ԱՄՆ) դատական որոշմամբ արգելվեց երկու խոշոր միջազգային ծխախոտ արտադրողներին՝ «Ֆիլիպ Մորիս/Ալտրիա» և «Բրիտիշ Ամերիկան Թաբակո» ընկերություններին, ԱՄՆ-ում օգտագործել ծխախոտի այնպիսի խեղաթյուրող անվանումներ, ինչպիսիք են «խեթի ցածր բաղադրությամբ», «թեթև», «զերթեթև», «փափուկ» և այլն: Երկու շաբաթ անց, նույն ընկերությունները դիմեցին դատարան՝ խնդրելով թույլատրել արգելված անվանումների օգտագործումը ԱՄՆ-ից դուրս: Հայաստանյան շուկայում նշված միջազգային, ինչպես նաև տեղական արտադրողները հնարավորություն ունեն անարգելք մուտքեցնել սպառողին: Ի լրացում. Եվրոպական արդարադատության դատարանի որոշման շնորհիվ, նման պիտակների օգտագործումը արդեն իսկ արգելված է Եվրոմիության երկրներում:

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքը իր անհանգստությունն է հայտնուցնում օրենսդրական փոփոխությունների կիրարկման պատշաճ վերահսկման բացակայության առընչությամբ:

Մենք խորապես համոզված ենք, որ միայն միասնական, պետական և հասարակական կազմակերպությունների ջանքերով հնարավոր կլինի արդյունավետ պայքարել Հայաստանում հանրային առողջությանը սպառնացող մեծագույն չարիքի՝ ծխախոտամոլության դեմ:

Նարինե Մովսիսյան

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի կորդինատոր
Երևան, Բաղրամյան 40, #46հեռ. 512 617; ֆաքս՝ 512 566,
էլ. փոստ՝ nmovsesi@aua.am



CHILDREN'S HEALTH CARE ASSOCIATION
ԵՐԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՐՈՆՄԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ

